ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՋԱԼԱԼ ԱԴ-ԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1220-1222 թթ. դնպի Անդրկովկաս կատարած հետախուզական արշավանքի ընթացքում մոնղոլական 20 հազարանոց բանակը Ջեբե Նոյինի և Սուբադայ Բահատուրի գլխավորությամբ երկրամասում բազմաթիվ ավերածություններ գործելուց և երեք ճակատամարտերում հայ-վրացական զորքերին հաղթելուց հետո հեռացավ Հյուսիսային Կովկաս[1]: Մոնղոլների հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն տարածաշրջանում հզորագույններից մեկը համարվող վրացական թագավորությունում ավատատիրական ներհակություններով, այլև նրանով, որ վրաց թագավոր Գեորգի Լաշան (1207-1222), Գանձակի Էլտկուզյան աթաբեկ Ուզբեկը (1210-1225) և Շիրվանի տիրակալ Գուշտասբ I-ը (1203-1225) չկարողացան իրենց հակասությունները մի կողմ դնելով մոնղոլների դեմ միասնական ճակատ կազմել:

Երբ մոնղոլները մտան Հյուսիսային Կովկաս, նրանց ճնշման տակ թյուրքական ցեղերից մեկի՝ ղփչաղների մի ստվար հատված, որի կռվող ուժը Զ. Բունիյաթովն առանց աղբյուրը նշելու 50 հազար է հաշվում[2], 1222 թ. ներխուժեց Շիրվան: Մոտենալով Դերբենտին, նրանք վերջինիս տիրակալ էմիր Ռաշիդից՝ Գուշտասբ I-ի եղբորից, հավատարիմ ծառայության դիմաց բնակության տեղ խնդրեցին: Սակայն զգուշավոր Ռաշիդը ոչ միայն մերժեց, այլև նրանց իր տիրույթներից վտարելու անհաջող փորձ կատարեց: Դրան հետևեց ղփչաղների կողմից Դերբենտի ենթագրենն գրավումն ու կողոպուտը[3]. Ղփչաղներն այնուհետև, Դերբենտից հեռանալով, պաշարեցին Կապաղակ (Կաբալա) քաղաքը, որն իր գավառով մտնում էր վրացական թագավորության կազմի մեջ: Իբն ալ-Ասիրի անուղղակի, իսկ Կիրակոս Գանձակեցու ուղղակի վկայություններից հետևում է, որ նրանք Կապաղակի տիրոջ միջոցով Գեորգի Լաշայից և վրացական թագավորության աթաբեկ Իվանե Զաքարյանից բնակության տեղ խնդրեցին՝ խոստանալով հավատարիմ ծառայություն: Մի քանի օր անց մեր-

ժում ստանալով՝ ղփչաղները կողոպտում են Կապաղակ գավառն ու շարժվում դեպի Գանձակ՝: Դերբենտում ղփչաղների դրսևորած ենթգությանը քաջատեղյակ էմիր Քուշխարան՝ Գանձակում Ուզբեկի տեղապահը, զորքով նրանց ընդառաջ է դուրս գալիս: Ղփչաղները, մարտից խուսափելով և վստահության պատանդներ ուղարկելով, Քուշխարային հավատացնում են, որ իրենք եկել են Ուզբեկին ծառայելու, իսկ Դերբենտը գրավել են, քանզի Շիրվանի տերն իրենց արգելել էր դա անել: Ղփչաղների փաստարկին հավատալով՝ Քուշխարան նրանց թույլ է տալիս տեղավորվել Գանձակի շրջակայքում և այդ մասին իրազեկ պահում աթաբեկ Ուզբեկին: Վերջինս հրամայում է ղփչաղներին բնակեցնել Քիլքուն լեռան մոտ՝: Ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցին, Գանձակի բնակիչները ղփչաղներին «յոժարութեամբ ընկալան, քանզի էին ի մեծ նեղութեան ի զօրացն վրաց, որք աւերէին զաշխարհս նոցա և գերէին զմարդ և զանասուն: Եւ նոցա տեղի բնակութեան ի սահմանս քաղաքին, օգնէին և այլ կերակրօք և ըմպելօք, զի նոքօք կայցեն ընդդէմ թագաւորութեանն Վրաց»[6]: Այսպիսով, իր տիրույթներում ղփչաղներին բնակեցնելով՝ Ուզբեկը նպատակ ուներ նրանց օգնությամբ հետ մղել Գանձակի աթաբեկության վրա հայ-վրացական զորքերի շարունակական հարձակումները: Դրանք ընդհատվել էին 1217 թ., երբ Ուզբեկը ճարահատյալ ընդունել էր խորեզմշահ Մուհամմադի (1200-1220) գերիշխանությունը[7]: Այժմ արդեն, երբ մոնղոլների կողմից 1218-1220 թթ. խորեզմշահերի պետության ջախջախումից ու փաստական վերացումից և Մուհամմադի անփառունակ վախճանից հետո Ուզբեկը զրկվել էր հզոր հովանավորությունից, հայ-վրացական սպասելի ոտնձգություններին փորձում էր դիմագրավել ղփչաղների օգնությամբ:

Կապաղակի պաշարումն ու գավառի կողոպուտը և Գանձակի Էլտկուզյան աթաբեկությունում ղփչաղների հաստատվելը վրաց արքունիքին ստիպում է համապատասխան քայլի դիմել: Իվանե աթաբեկը, զորք հավաքելով, փորձում է ղփչաղներին հանկարծակիի բերելով կոտորել, իսկ Գանձակը՝ գրավել ու ավերել: Սակայն իրադարձություններն այլ ընթացք են ստանում, քանի որ Քուշխարային հայ-վրացական կողմի մտադրությունը հայտնի է դառնում և նա ղփչաղներին հրամայում է վերադառնալ ու բանակել Գանձակի մոտ: Քուշխարայի նաոգատրությունը

A 90470

կատարելուց հետո ղփչաղների մի զորախումբ շարժվում է հայ-վրացական զորքերին ընդառաջ և պարտության մատնում[8]: Իբն ալ-Ասիրը ղփչաղների հաղթանակը բացատրում է հակառակորդին հանկարծակիի բերելով, իսկ Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը՝ հայ-վրացական զորքի հոգնածությամբ, ինչպես նաև Իվանե աթաբեկի ինքնավստահությամբ ու անզգուշությամբ, որը քխում էր նրա բանակի մեծաքանակությունից[9]: Ակներև է, որ Իվանե աթաբեկի զորքի երթուղուն իրազեկ ղփչաղները, նախօրոք հարմար տեղ ընտրելով, ռազմերթից հոգնած հակառակորդին մարտ էին պարտադրել ու հաղթել: Այս ճակատամարտի նկարագրության ժամանակ Կիրակոս Գանձակեցու օգտագործած «լքեալ զօրն վրաց»[10] արտահայտությունը ենթադրել է տալիս, որ այս անգամ ևս Իվանե աթաբեկն իբրև զորահրամանատար պատշաճ բարձրության վրա չի գտնվել: Հայ-վրացական զորքը, մեծ կորուստներ տալով, փախուստի է դիմում, իսկ շատ հայտնի իշխաններ ու ազատներ գերվում են: Գերվածների մեջ էր նշանավոր իշխան Խաղբակի որդի Պապաքը, իսկ զոհվածների մեջ՝ թոռը՝ Վասակի որդի Գրիգորը՝ «արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն տաճկաց»[11]: Գրիգորին Գանձակում բանտարկելով՝ կտտանքների միջոցով փորձում են մահմեդական դարձնել, սակայն նա հրաժարվում է և տանջամահ արվում[12]: Մյուս գերյալներին ղփչաղները սենդի կամ հագուստի դիմաց Գանձակում վաճառում են. «և պարսիցն գնեալ նոսա,- գրում է Կիրակոս Գանձակեցին,- անհնարին ներութեամբ կեղէին զկնանս նոցա. և այնքան պահանջէին ի նոցանէ կշիռս ոսկւոյ և արծաթոյ, մինչև անհնարին լիներ հատուցանել. և բազումք մնռան ի բանտի անդ»[13]: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Գանձակի քրիստոնյաները, այսինքն՝ հայերը, անում էին հնարավորը՝ նրանց փրկագնելու կամ գոնե վիճակները թեթևացնելու համար[14]:

Երբ ղփչաղները վերադառնում են Քիլքուն լեռան մերձակայքում գտնվող իրենց բնակատեղին, ճակատամարտին չմասնակցած ղփչաղական մի այլ զորամաս որոշում է կրկնել նրանց հաջողությունը: Քուշխարան նրանց հորդորում է չշտապել, մինչև ինքը չպարզի հակառակորդի դրությունը: Սակայն, ըստ երևույթին, ղփչաղները, նախորդ հեշտ հաղթանակով ոգևորված, նրան չեն լսում և վրացական թագավորություն ներխուժելով Իվանե ա-

թաբենկին պատկանող Վարդանաշատ գավառում կողոպուտ ու ավերածություններ կատարելով և գերիներ վերցնելով՝ հետ են դառնում[15]: Այս անգամ արդեն, նախորդ անհաջողությունից համապատասխան հետևություններ արած Իվանե աթաբեկը, նրանց հանկարծակիի բերելով, Վարդանաշատի շրջանում գլխովին ջախջախում է, շատերին գերում, իսկ ավարն ու գերիներին հետ խլում[16]:

Եթե Կիրակոս Գանձակեցին պնդում է, որ այս ճակատամարտում Իվանե աթաբեկը կոտորել է ղփչաղների ամբողջ զորքը, ապա Վարդան վարդապետը հայտնում է, որ կոտորվել է «զաւելի մասն խչաղին»[17], ինչը համահունչ է Իբն ալ-Ասիրի վկայությանը և համապատասխանում է իրականությանը: Ինչ վերաբերում է այս ճակատամարտի թվագրությանը, սակայն իրապատում է Կիրակոս Գանձակեցին և ոչ թե Վարդան վարդապետը: Նրանցից առաջինն այս ճակատամարտը թվագրում է նախորդից «յետ աւուրց ինչ անցանելոյ», իսկ երկրորդը՝ «ի գալ ամին», այսինքն՝ 1223 թ.[18]: Կիրակոս Գանձակեցու իրավացիությունը երևում է Իբն ալ-Ասիրի այն հաղորդումից, ըստ որի հայ-վրացական զորքերն այս իրադարձությունից հետո՝ 1222 թ. աշնանը (9 հոկտեմբեր – 8 նոյեմբեր) գրավել են Բայլականը[19]: Հետևաբար, Հ. Մանանդյանը և նրա հետևությամբ Լ. Բաբայանը սխալվել են, երբ Վարդան վարդապետի վկայությունը հիմք ընդունելով, այս ճակատամարտը թվագրել են 1223-ով[20]:

Այս ճակատամարտից հետո ղփչաղների մնացորդները շարժվում են Պաքտավ և Քուշխարային խնդրում զորքով միանալ իրենց պարտության վրեժը լուծելու համար: Սակայն Քուշխարան, ղփչաղների ինքնագլխությունից դժգոհելով և հայ-վրացական բանակի հետ բախումից զգուշանալով, հրաժարվում է դա անել, ինչը հանգեցնում է նրանց հարաբերությունների սրմանը: Ղփչաղները հետ են պահանջում իրենց տված վստահության պատանդներին և, մերժում ստանալով, փոխարենը գերում Ուզբեկի բազմաթիվ հպատակների, ինչպես նաև դիմում զանազան խժդժություններ: Սա, բնականաբար, հարուցում է տեղի բնակչության սուր դժգոհությունը, որն ըմբոստանում է ղփչաղների դեմ. Դրա հետևանքով բազմաթիվ ղփչաղներ սպանվում են: Խիստ թշնամական միջավայրը ղփչաղներին հարկադրում է հեռանալ Շիրվան, իսկ այնտեղից լաքզների երկիրը: Ճանապարհին

նրանք ենթարկվում են տեղի մահմեդական բնակիչների, հայ-վրացական զորքերի և լաքզների հարձակումներին՝ տաղով մեծ կորուստներ[21]:

Այս իրադարձություններից որոշ ժամանակ անց՝ 1222 թ. աշնանը (9 հոկտեմբեր – 8 նոյեմբեր) հայ-վրացական զորքերը, վերսկսելով Գանձակի Էլտկուզյան աթաբեկության վրա 1217 թ. ընդհատված արշավանքները, ինչպես նշվեց, պաշարում են Բայլականը: Այդ քաղաքը նոր էր սկսել ապաքինել մոնղոլների պատճառած վերքերը և կենդանի մնացած բնակիչները հնարավորինս ամրացրել էին Բայլականի՝ մոնղոլների կողմից ավերված պարիսպները: Ուզբեկը, որը գտնվում էր Թավրիզում ու տրվել էր անառակությանն ու հարբեցողությանը, բայլականցիներին չի օգնում, և հայ-վրացական զորքերին հաջողվում է Բայլականը գրավելով կողոպտել ու ավերել, իսկ բնակչությանը՝ սրի քաշել[22]. Այս իրադարձության մասին պատմելիս Իբն ալ-Ասիրը հայ-վրացական զորքերին անվանում է «լավագույն թշնամիներ», դա պատճառաբանելով նրանով, որ նախքան այդ, նրանք, իբրև կանոն, որևէ քաղաք գրավելուց հետո այն չէին ավերում բավարարվելով քաղաքացիների տված որոշակի գումարով: Պատմիչի վկայությամբ, բայլականցիները, կարծելով, թե այս անգամ ևս հայ-վրացական զորքերից կարող են համապատասխան գումարով փրկագնվել, նրանց անհրաժեշտ դիմադրություն չէին ցույց տվել կամ էլ փախել[23]: Տվյալ դեպքում բայլականցիների նկատմամբ հայ-վրացական զորքերի դրսևորած դաժանությունը թերևս բացատրվում է նրանց մեծ տհաճություններ պատճառած ղփչաղների հարցում Ուզբեկի վերաբերմունքով: Դեպի Բայլական հայ-վրացական զորքերի արշավանքի մասին հայ-վրացական աղբյուրները լռում են:

1223 թ. սեպտեմբերին, երբ Սուրմարիի (Սուրբ Մարի) տերը գտնվում էր Խլաթում, նրա տեղապահ էմիրը, որի անունն Իբն ալ-Ասիրը չի հիշատակում, զորք հավաքելով ներխուժում է Զաքարյան Հայաստան և ավարառուական գործողություններ իրականացնում շրջակա տարածքներում՝ կողոպտելով բազմաթիվ գյուղեր[24]: Ըստ Իբն ալ-Ասիրի, ի պատասխան, «Դուինի (Դվին - Ա. Ծ.) տերը, որի անունն էր Ծաղուա և վրաց (քուրջ) մեծամեծ իշխաններից էր, զորք հավաքեց, շարժվեց Սուրմարի, այն օրերով պաշարեց կողոպտեց քաղաքը, նրա շրջակայքը և վերադար-

ձավ»[25]: Դեպքերի հետագա ընթացքին անդրադառնալիս պատմիչը ևս երկու անգամ Շալուային հիշատակում է իբրև Դվինի տեր (ամիրա) և սուրմարեցիների դեմ արշաված հայ-վրացական զորքի հրամանատար: Սակայն, իրականում, Դվինը պատկանում էր Իվանե աթաբեկին և նրա երկու նստավայրերից մեկն էր (մյուսը Բջնին էր): Պնդել, որ Իբն ալ-Ասիրն Իվանե աթաբեկին ու Շալուային նույնացրել է, ճիշտ չի լինի, քանի որ նրանց քաջ գիտի և հստակ տարբերում է՝ մասնավորապես Իվանեին քանիցս տարբեր առիթներով հիշատակելով[26]: Հետևաբար, իրոք, սուրմարեցիների վրա հարձակված հայ-վրացական զորքի հրամանատարը եղել է Շալուան: Քանի որ սուրմարեցիներն արշավել էին Դվինի շրջակա գյուղերի վրա, իսկ նրանց դեմ ի պատասխան հարձակված զորքը եկել էր Դվինից, պատմիչը կարծել է, թե Շալուան եղել է Դվինի տերը: Շալուայի ով լինելը պարզվում է Իբն ալ-Ասիրի հետագա շարադրանքից: Բանն այն է, որ Իբն ալ-Ասիրը, իբրև կանոն, այս կամ այն հայտնի անձնավորության մասին խոսելիս նրան հնարավորինս սպառիչ է ներկայացնում՝ հետագայում բավարարվելով անվան սոսկական հիշատակմամբ: Նա իր սկզբունքից չի շեղվել նաև Շալուայի հարցում և նրան վերջին անգամ հիշատակելիս բավարարվել է միայն անունը նշելով: Եվ քանի որ նա վերջին՝ չորրորդ (հանվանն՝ երրորդ) անգամ Շալուային հիշատակում է Գառնիի 1225 թ. ճակատամարտում գերվելու առթիվ. «շատերը գերի ընկան, որոնց մեջ էր Շալուան»[27], ապա պարզվում է, որ նա վրաց հայտնի իշխան Շալվա Ախալցիխելին է՝ նույն մարտում զոհված Իվանե Ախալցիխելու եղբայրը[28]:

Երբ Շալվա Ախալցիխելու գլխավորած հայ-վրացական զորքը հետ էր դառնում, նրա վերջապահին հասնում է Սուրմարիի տիրոջ բանակը և ավարը հետ խլում[29]: Քիչ անց հայ-վրացական զորքերը Շալվա Ախալցիխելու հրամանատարությամբ կրկին շարժվում են դեպի Սուրմարի, սակայն, Դվինից Սուրմարի տանող ճանապարհին այդ արշավանքի մասին տեղեկացված սուրմարեցիների կողմից շրջապատվելով պարտվում են՝ ստիպով մեծաքանակ զոհեր ու գերյալներ: Վերջիններիս թվում էին Շալվա Ախալցիխելին ու մի խումբ մեծատոհմիկներ[30]: Իրադարձությունների նման ընթացքը վրաց արքունիքին ստիպում է բացատրություն պահանջել Էյուբյան տիրակալ ալ-Աշրաֆից, որի եղ-

բայր ու ենթակա Շիհաբ ալ-Դին Ղազիի վասալն էր Սուրմարիի տերը: Ալ-Աշրաֆին վրաց արքունիքի հղած նամակում ասվում էր. «Եթե հաշտության մեջ ենք, ցանկանում ենք, որ գերությունից արձակեք մեր մարդկանց: Իսկ եթե խաղաղությունը մեր մեջ արդեն խախտված է, ապա հայտնեցեք մեզ, որպեսզի մենք միջոցներ ձեռք առնենք»[31]: Այս նամակին ի պատասխան ալ-Աշրաֆը Սուրմարիի տիրոջը հրամայում է ազատ արձակել գերիներին և վերանորոգել հաշտությունը, ինչը և արվում է[32]: Էյուբյան տիրակալի այս քայլը բացատրվում է Իկոնիայի՝ վերստին հզորացող սուլթանության վտանգավոր հարևանության և տարածաշրջանի անկայուն իրադրության պայմաններում ի դեմս վրացական թագավորության ոչ պակաս ուժեղ թշնամի չստեղծելու մտահոգությամբ: Այս իրադարձությունների մասին ևս հայ-վրացական աղբյուրները լռում են: Օգտվելով Էյուբյանների թուլացումից, մոնղոլական նվաճման նախօրյակին՝ 1235 թ., Զաքարյանները (Շահնշահ ամիրսպասալար) իրագործելով իրենց վաղեմի նպատակը, տիրացան Սուրմարիին[33]: Ինչպես ճիշտ նկատել է Հ. Մարգարյանը, հենվելով Ստեփանոս Օրբելյանի և վրաց անանուն ժամանակագրի տեղեկությունների վրա[34], նրանք հավանաբար այդ ժամանակ են գրավել նաև Կաղզվանն ու Վաղարշակերտը[35]:

1225 թ. հայ-վրացական զորքերը վերսկսեցին Գանձակի Էլտկուզյան աթաբեկության դեմ հարձակումները և պաշարեցին Գանձակը: Սակայն պաշարումը ոչ միայն անհաջող անցավ, այլև պաշարյալները քաղաքից դուրս գալով մարտի մեջ մտան հայ-վրացական զորքերի հետ և նրանց պարտության մատնելով ստիպեցին ձեռնունայն հեռանալ[36]: Այդ նույն թվականին իր որդու՝ Ֆարիբուրզի կողմից գահընկեց արված շիրվանշահ Գուշտասբ I-ը իր իշխանությունը վերականգնելու նպատակով դիմեց վրացական արքունիքին, հաջողության դեպքում խոստանալով իր տիրույթների կեսը: Շիրվանշահին վերստին գահ բարձրացնելու համար վրաց արքունիքն ուղարկում է երեք հազարանոց բանակ: Գուշտասբ I-ի որդին նրա դեմ է դուրս գալիս հազար հեծյալից բաղկացած զորամասով և ծանր պարտության մատնում: Հայ-վրացական բանակը տալիս է բազմաթիվ սպանվածներ ու գերյալներ և հեռանում Շիրվանից: Դրանից հետո վրաց արքունիքն այլևս չի միջամտում Շիրվանի ներքին գործերին[37]:

Այս իրադարձությունից հետո, դարձյալ 1225 թ., հայ-վրացական մի զորամաս, Տփխիսից դուրս գալով, արշավում է դեպի Ատրպատական: Սակայն, ճանապարհին մի կիրճում այն, դարանակալ հարձակման ենթարկվելով, ջախջախվում է՝ տալով բազմաթիվ սպանվածներ ու գերյալներ[38]: Այս խայտառակ պարտության վրեժն առնելու նպատակով վրաց արքունիքը ձեռնամուխ եղավ դեպի Ատրպատական նոր արշավանքի նախապատրաստմանը: Սակայն, այդ ընթացքում լուր ստանալով, որ խորեզմշահ Մուհամմեդի որդի Ջալալ ադ-Դինը մտել է Մարսուդա, վրաց արքունիքն այդ մտքից ոչ միայն հրաժարվեց, այլև աթաբեկ Ուզբեկին առաջարկեց համատեղ ուժերով հետ մղել Ջալալ ադ-Դինին: Վրաց արքունիքն իր առաջարկությունը հիմնավորում էր նրանով, որ համատեղ չգործելու դեպքում Ջալալ ադ-Դինը նախ Գանձակի Էլտկուզյան աթաբեկությունը կգրավի, ապա՝ վրացական թագավորությունը[39]: Մինչ նրանք համաձայնության կգային, Ջալալ ադ-Դինը նրանց կանխեց և, իսկապես, հնշտությամբ գրավեց նախ Գանձակի Էլտկուզյան աթաբեկությունը, ապա նաև վրացական թագավորությունը:

Այսպիսով, մոնղոլների 1220-1222 թթ. հետախուզական արշավանքներից մինչև 1225 թ. սկսված Ջալալ ադ-Դինի նվաճումների արանքում ընկած ժամանակաշրջանում Անդրկովկասում չէին դադարում երկրամասի և շրջակա քաղաքական կազմավորումների զինական բախումները, որոնք ավելի էին թուլացնում նրանց առանց այդ էլ մոնղոլների արշավանքի հետևանքով նվազած ուժերը և պարարտ հող պատրաստում մի նոր, հզոր թշնամու՝ խորեզմցիների կողմից երկրամասի դյուրին նվաճման համար: Անդրկովկասում հզորագույն քաղաքական կազմավորումը համարվող վրացական թագավորությունն այդ ընթացքում իրենից անհամեմատ թույլ հակառակորդների հետ բախվելիս, ինչպես տեսանք, շարունակ անհաջողություններ էր կրում, ինչը հղի էր լուրջ վտանգներով, ինչպես այդ պետության, այնպես էլ ավատական ենթակարգության սկզբունքով նրա կազմի մեջ մտնող Զաքարյան Հայաստանի համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս *Ա. Շահնազարյան*, Մոնղոլների հնտախուզական արշավանքն Անդրկովկաս («Պատմա-բանասիրական հանդես», 2000, N 2, էջ 85-107):

2. *З. М. Буниятов*, Государство атабеков Азербайджана (1136-1225 годы), Баку, 1978, с. 118.

3. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), հ. 11, Երևան, 1981, էջ 308-309, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբաններ, Վենետիկ, 1862, էջ 142, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 204:

4. *Իբն ալ-Ասիր*, էջ 309-310, Կիրակոս Գանձակեցի, էջ 204:

5. *Իբն ալ-Ասիր*, էջ 310: Ա. Տեր-Ղևոնդյանը հակված է նղել Քիլբունը, համահնչյունությունից ելնելով, նույնացնել Գեղարքունիքի հետ (Իբն ալ-Ասիր, էջ 404, ծան. 330): Դա անընդունելի է թեկուզ այն պատճառով, որ Գեղարքունիքը գտնվում էր վրացական թագավորության տարածքում՝ Իվանե աթաբեկի տիրույթների մեջ: Հայ-վրացական զորքերի և ղփչաղների միջև կայացած երկրորդ ճակատամարտից հետո վերջիններիս մնացորդների Պարտավ դիմելը (Իբն ալ-Ասիր, էջ 311) ենթադրել է տալիս, որ Քիլբունը պետք է փնտրել այդ տարածքում:

6. *Կիրակոս Գանձակեցի*, էջ 204:

7. *Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави*, Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурны, Баку, 1973, с. 61.

8. *Իբն ալ-Ասիր*, էջ 310:

9. Նույն տեղում, *Կիրակոս Գանձակեցի*, էջ 204-205, *Վարդան վարդապետ*, էջ 142-143: Մխիթար Այրիվանեցին, այս իրադարձությանն անդրադառնալով, բավարարվել է «ղփչաղն նեար զԼաշայն ի Գանձակ» («Մխիթարայ Այրիւանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 81) արտահայտությամբ՝ հայ-վրացական զորքի հրամանատարությունը սխալմամբ վերագրելով Գեորգի Լաշային:

10. *Կիրակոս Գանձակեցի*, էջ 205:

11. Նույն տեղում: Հմմտ Վարդան վարդապետ, էջ 142-143, Մխիթար Այրիվանեցի, էջ 80:

12. *Կիրակոս Գանձակեցի*, էջ 205-206:

13. Նույն տեղում, էջ 205:

14. Նույն տեղում, էջ 206:

15. *Իբն ալ-Ասիր*, էջ 310-311:

16. Նույն տեղում, էջ 311, *Կիրակոս Գանձակեցի*, էջ 205, *Վարդան վարդապետ*, էջ 143:

17. Կիրակոս Գանձակեցի, էջ 206-207, *Վարդան վարդապետ,* էջ 143:

18. Կիրակոս Գանձակեցի, էջ 206, 207, *Վարդան վարդապետ,* էջ 143:

19. Իբն ալ-Ասիր, էջ 311:

20. *Հ. Մանանդյան,* Քննական տնտեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 186, Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 189:

21. Իբն ալ-Ասիր, էջ 311:

22. *Նույն տեղում.* էջ 311-312:

23. Նույն տեղում:

24. Նույն տեղում, էջ 312:

25. Նույն տեղում:

26. Նույն տեղում, էջ 314, 321, 325, 328:

27. Նույն տեղում, էջ 321:

28. «Վրաց ժամանակագրություն (1207-1318)», Երևան, 1971, էջ 61, *ан-Насиви,* с. 159.

29. Իբն ալ-Ասիր, էջ 312:

30. Նույն տեղում, էջ 313:

31. Նույն տեղում:

32. Նույն տեղում:

33. *«Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.»,* հ. I, Երևան, 1951, էջ 41, Կիրակոս Գանձակեցի, էջ 260:

34. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 391-392, *«Վրաց ժամանակագրություն (1207-1318)»,* էջ 91:

35. *Հ. Գ. Մարգարյան,* Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ («Պատմաբանասիրական հանդես», 1981, N 4, էջ 137, ծան. 71):

36. Իբն ալ-Ասիր, էջ 317:

37. Նույն տեղում, էջ 318-319: Հմմտ. *Сара Ашурбейли,* Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983, с. 151-152.

38. Նույն տեղում, էջ 319:

39. Նույն տեղում: